ԺՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

<<ՕՐԴ>>

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄԻՐՍԱՐԻ ԿՐԱՅԻՆ ՄԵՐԳԵԼՆԵՐԻ (ԿԱՎԱԿՐԱՔԱՐԵՐ) ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ / C1 III, C1 IVa, C1 IV Б, C1 V a, C1 V Б, B-1-ի մի մասը/ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Պատվիրատու՝

<<Օրդ>> ՍՊԸ տնօրեն՝ Տիգրան Օրդուխանյան

Կատարող՝

<<Յուլի-Դալի>> ՍՊԸ տնօրեն՝ Լիլիթ Փաշինյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		էջ
	ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	4
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
	Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	5
	Նախատեսվող գործունեության բնութագիրը	6
	Նախագծման նորմատիվ-իրավական հենքը	7
2.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	12
	Գտնվելու վայրը	12
	Ռելիեֆ, երկրաձևաբանություն, սեյսմիկ պայմաններ	14
	Շրջանի կլիման	18
	Մթնոլորտային օդ	19
	Ջրային ռեսուրսներ	20
	Հողեր	22
	Բուսական և կենդանական աշխարհ	23
	Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	25
3.	ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	29
	Ենթակառուցվածքներ	29
	Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	33
	Պատմության, մշակութային հուշարձաններ	34
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	36
5.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	40
6.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ	54
	Օգտագործված գրականության ցանկ	57

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արարատի մարզի Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարեր) հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի մշակմանն ընդառաջ, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 48.1 հոդվածին համապատասխան, կազմվել է սույն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը: Նախնական գնահատման հայտում ներկայացվում են հետևյալ տվյալները.

- նախատեսվող գործունեության ենթակա տարածքի շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը և իրադրության սխեման,
- նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ),
- շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը,
- տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լսումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ:

ՁԵՌՆԱՐԿՈՂԻ ԱՆՈՒՆԸ (ԱՆՎԱՆՈՒՄԸ) ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ (ԳՏՆՎԵԼՈՒ) ՎԱՅՐԸ

Անվանում	**«ՕՐԴ» ՍՊԸ** *պետական գրանցման համար՝ 273 110 120 3857* ՀՎՀՀ՝ 02849078
Գտնվելու վայր	ՀՀ, ք. Երևան, Ավագ Պետրոսյան 2, բն 15,1

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Ընդերքօգտագործման իրավունք՝ համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով հավաստվող՝ ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունքներ.

Օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության,

էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ

Արտադրական լցակույտեր՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոններ (այդ թվում՝ պոչանքներ)՝ տեղադրված երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում:

- ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ***Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը***

ՀՀ Արարատի մարզի Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարեր) հանքավայրում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:

Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարեր) հանքավայրը գտնվում է ՀՀ Արարատի մարզում:

Հայցվող տարածքը գտնվում է Երախ (Կարմիր սար) լեռան հարավ-արևմտյան լանջին, որը հանդիսանում է Գեղամա լեռների հարավ-արևմտյան ծայրամաս և անցումային հատված է Գեղամա լեռների և Արարատյան իջվածքի միջև: Տարածքը իրենից ներկայացնում է ուժգին կտրտված ռելիեֆով ցածր լեռնային շրջան: Առավելագույն բարձրություններն են Երախ (Կարմիր սար) լեռը 1419,2մ, Օձասարը 1462,3մ, Կաքավասարը 1853,9մ:

Գեղամա լեռները բնութագրվում են անհամաչափ կառուցվածքով: Արևելյան լանջերը, մեղմաթեք իջնելով, աստիճանաբար ձուլվում են մերձսևանյան լավային սարավանդներին: Արևմտյան զառիկող լանջերն իջնում են Հրազդանի հովիտը՝ առաջացնելով նախալեռնային գոտի՝ Հատիս, Գութանասար, Մենակսար և այլ հրաբուխներով: Ջրբաժան գոտին 2800-3000 մ բարձր, ալիքավոր սարավանդ է՝ հրաբխային կոներով (Աժդահակ, Մազազ, Սևկատար) և ժայթքման մնացորդային գմբեթներով (Սպիտակասար, Գեղասար, Գնդասար և այլն): Հարավ-արևմուտքում անջատվում է Ողջաբերդի սեղանաձև լեռնաճյուղը: Հարավում բարձրադիր մասը մասնատված է գետահովիտներով ու կիրճերով:

Հանքավայրի շրջանը հարում է Արարատյան դաշտի հարավ-արևելյան մասը կազմող հարթավայրին, որի թեքության անկյունը չի գերազանցում 4°: Բարձրությունը տատանվում է 800-1000մ-ի սահմաններում, բուն տեղամասի տարածքը՝ մինչև 1242մ: Արարատյան դաշտը Արարատյան գոգավորության հատակն է՝ լցված լճագետային, հեղեղաբերուկ նստվածքներով և լավաներով: Ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք՝ Ախուրյանի գետաբերանից մինչև Գայլի դրունք, որով բաժանվում է Շարուրի դաշտից: Դաշտի երկարությունը կազմում է ավելի քան 100 կմ, իսկ լայնությունը մինչև 25 կմ: Արարատյան գոգավորությունը նեոգեն, չորրորդականի գոգածալքային-

գրաբենային բարդ կառուցվածք՝ տրոհված բազմաթիվ երիտասարդ խզումներով: Գոգավորության հիմքի բեկորային կառուցվածքները ուշ պլիոցենում ենթարկվել են գետերի էռոզիոն մասնատման, որոնք վաղ չորրորդականում լցվել են 100-300մ հզորությամբ լավահոսքերով: Հզոր լավահոսքերը Արարատի և Նախիջևանի գոգովարություններն իրարից անջատող հորստաբեկորային հատվածում արգելափակել են Արաքսի հին հունը, առաջացել է լիճ, որի հետևանքով գոյացել են Արարատյան դաշտի նստվածները: Արարատյան դաշտի եզրագոտին ներկայացված է սամանակակից գետերի արտաբերման և ջրաբերուկային հովհարաձև կոներով, որոնք վերածվել են սեղանաձև դարավանդների: Տարածքում տեղ-տեղ բարձրանում են ծալքաբեկորավոր հիմքի ելուստներ (Խոր Վիրապ, Սարիպապ, Սալհովիտ) կամ խարամային կոներ (Դավթի բլուր, Մեծամոր):

- ***Նախատեսվող գործունեության բնութագիրը***

Ընկերությունը ՀՀ Արարատի մարզի Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարեր) հանքավայրից արդյունահանման աշխատանքներն իրականացնելու է բաց եղանակով:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ծավալներից, օգտակար հաստվածքի մշակումը նախատեսվում է բացահանքով: Հանույթային աշխատանքները կատարել էքսկավատոր ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով:

Նշված պայմաններով կառուցված բացահանքն ունի հետևյալ պարամետրերը.

- Ամենամեծ երկարությունը - 900մ,
- Ամենամեծ լայնությունը - 500մ,
- Բացահանքի մշակման ամենամեծ խորությունը մինչև 36.13մ,
- Մակաբացման ապարների միջին հզորությունը -0.5մ,
- Օգտակար հանածոյի միջին հզորությունը – 23.75մ,

Աշխատանքային ռեժիմը ընդունված է շուրջտարյա՝ 260 օրով, միահերթ, 8 ժամ տևողությամբ մեկ հերթափոխով:

- Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը – 9 659. 55 հազ. մ3,

- Օգտակար հանածոյի արդյունահանվող պաշարների քանակը – 7 505.47 հազ. մ3,
- Օգտակար հանածոյի տարեկան մարվող պաշարների քանակը – 482 978 մ3
- Օգտակար հանածոյի տարեկան արդյունահանվող պաշարների քանակը – 375 274 մ3
- Մակաբացման ապարների քանակը – 181 964 մ3,
- Օտարման մակերեսը - 35.61 հա
- Մակաբացման միջին գործակիցը նախագծվող տարածքում կազմում է՝ 0.0188մ3/մ3:

Հանքավայրի նախագծվող սահմաններում 35.61հա) օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները ըստ B+C1 կարգով կազմում է 9 659 550մ3:
Արդյունահանված օգտակար հանածոն նախատեսվում է իրացնել տեղում, իսկ մակաբացման ապարները՝ միջինը 2կմ հեռավորությամբ ներքին լցակույտ:

Հիմք ընդունելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 27-րդ հոդվածի պահանջները՝ մանրակրկիտ աշխատանքային նախագիծը կմշակվի 20 տարվա աշխատանքների կտրվածքով:

Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կատարել հանքի օտարման տարածքում խախտված հողերի (բացահանք, արտադրական հրապարակ, լցակույտ) լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա:

Հայցվող տարածքը մինչև նախատեսվող գործունեությունն իրականացնելը՝ հայցվող տեղամասում նախկինում որևէ աշխատանքներ իրականացված չեն: Առկա չեն խախտված, վերականգնված հողեր, լցակույտ, հանված, պահեստավորված, պահպանված հողարուսական շերտ և այլն:

- ***Նախագծման նորմատիվ-իրավական հենքը***

Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման

անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:
- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:
- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:
- Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն, ընդունված է 1994թ., լրամշակվել է 2022թ), կարգավորում է մթնոլորտային օդի

պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը, ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով `` մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 07.01.2022թ.-ի N6 հրաման, որով կարգավորվում են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ընդերքօգտագործողների կողմից նախատեսված ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:
- *ՀՀ* կառավարության 21.10.2021թ. ի N1733-Ն որոշում, որով սահմանվել է բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի (այսուհետ՝ դրամագլուխ) օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում

առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:

- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:
- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-N որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:
- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:
- ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N1059-Ա որոշում, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների

ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և ծրագրի միջոցառումները:

- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:
- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:
- ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 23-ի N 500-Ն որոշում, որով հաստատվել է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի կառավարման պլանը, սահմանների նկարագիրը և հատակագիծը:
- ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 324-Ն որոշում, որով հաստատվել է «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի սահմանների նկարագիրը և հատակագիծը,
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի նոյեմբերի 18-ի «Շրջակա միջավայրի նախարարության «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու և շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի մայիսի 14-ի N139-L հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 441-Լ հրաման:
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 07.01.2005թ.), որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:
- ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:
- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման,

հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:
- ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:
- ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:
- ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:

- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:
- ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ.-ի N533-Ն հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման հիգիենիկ նորմերը:
- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ՀՀ ընդերօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:
- ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի N1396-Ն որոշում, որով ահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի (այսուհետ՝ բերրի շերտ) նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ Կառավարության 15.06.2017թ. N675-Ն որոշում, որով հաստատվում են ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանի օրինակելի ձևերը:
- ՀՀ Կառավարության 17.08.2017թ. N990-Ն որոշում, որով սահմանվում են Ֆինանսական երաշխիքի բովանդակությունը և դրան ներկայացվող չափորոշիչները, դրանց ներկայացվող որակական չափանիշների գնահատման, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի հաշվարկման կարգը:
- ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների

հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

- ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ.-ի N342-Ն հրաման, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը:
- ՀՀ կառավարության 11,11,2021թ 1848-Ն որոշում:
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25,10,2022թ 369-Ն հրաման:

Միջազգային համաձայնագրեր

Ի լրումն վերը թվարկված նորմատիվային ակտերի, մշակվել են բնապահպանական ուղղվածության բազմաթիվ ռազմավարական, հայեցակարգային և ազգային ծրագրեր, ինչպես նաև ՀՀ կողմից ստորագրվել և վավերացվել են մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ:

Ստորև բերված են ՀՀ կողմից ստորագրված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները և դրանց կարգավիճակը ՀՀ-ում:

ՀՀ կողմից ստորագրված և վավերացված միջազգային կոնվենցիաները և արձանագրություններ

NN	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է	Ստորա-գրվել է	Վավերաց-վել է	Ծանոթագրում
1	Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրլող թռչուններիբնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1971			Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀԱԳՆ պահանջով, 1993 թ.
2	ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանությանմասին» կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո,1992թ.)	1993	1992	1993	Վերագրանցվել է,ՄԱԿ, 1993
3	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք,1992թ.)	1994	1992	1993	Վերագրանցվել է,ՄԱԿ, 1993
4	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.)	2005		2002	
	ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ				Վերագրանցվել

5	հեռավորությունների վրաօդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա (Ժնև, 1979թ.)	1983		1996	Է,ՄԱԿ, 1997
	Կայուն օրգանական աղտոտիչների մասինարձանագրություն, (Ստոկհոլմ, 2001)	2001	2001	2001	22.05.2001թ
	Էվտրոֆիկացիայի և գետնամերձ օզոնի մասին արձանագրություն, (Gothenburg, 1999)		1999		
6	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրաազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո1991թ.)	1997		1996	Վերագրանցվել Է,ՄԱԿ, 1997
	«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.)	2010	2010	2011	
7	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի»կոնվենցիա (Փարիզ, 1994թ.)	1996	1994	1997	Վերագրանցվել Է,ՄԱԿ, 1997
	ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների անդրսահ-մանային փոխադրման և դրանց հեռացման				

8	նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել, 1989թ.)	1992		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
9	«Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա (Վիեննա, 1985թ.)	1988		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
	«Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն (Մոնրեալ 1987թ.)	1989		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
10	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերիառնչությամբ տեղեկատվության հասանելիության,որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս1998թ.)	2001	1998	2001	

- ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

- ***Գտնվելու վայրը***

Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարեր) հանքավայրը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Արտաշատ խոշորացված համայնքի Այգեզարդ բնակավայրի վարչական տարածքում՝ Վեդի քաղաքից 7.5կմ հյուսիս-արևմուտք: Մոտակա բնակավայրերն են Այգեզարդ (մոտ 3.6կմ), Գինեվետ (մոտ 2,7 կմ), Քաղցրաշեն (մոտ 3. 3կմ), Նոր Ուղի գյուղերը (մոտ 3.0կմ): Հանքավայրի սպասարկող ողջ ենթակառուցվածքներն անցնում են Քաղցրաշեն բնակավայրի վարչական տարածքով:

Հանքավայրից հայցվող տարածքը բնութագրվում է հետևյալ կոորդինատներով.

1. X=8469475.6 Y=4424006.0
2. X=8469441.0 Y=4424030.0
3. X=8469438.0 Y=4424070.0
4. X=8469453.1 Y=4424095.9
5. X=8469464.6 Y=4424131.7
6. X=8469454.5 Y=4424177.8
7. X=8469376.8 Y=4424300.5
8. X=8469333.9 Y=4424429.6
9. X=8469345.5 Y=4424479.8
10. X=8469363.7 Y=4424486.1
11. X=8469410.0 Y=4424538.0
12. X=8469392.2 Y=4424567.9
13. X=8469433.7 Y=4424629.3
14. X=8469505.3 Y=4424738.6
15. X=8469613.7 Y=4424861.3
16. X=8470178.5 Y=4424725.2
17. X=8470200.0 Y=4424700.0
18. X=8470006.0 Y=4424590.0
19. X=8469600.0 Y=4424056.0
20. X=8469500.0 Y=4424040.0

Նկար 1.Հանքավայրի իրադրային հատակագիծ




1418.5 г. Ерах
1. 8469475.6 4424006.0
2. 8469441.0 4424030.0
3. 8469438.0 4424070.0
4. 8469453.1 4424095.9
5. 8469464.6 4424131.7
6. 8469454.5 4424177.8
7. 8469376.8 4424300.5
8. 8469333.9 4424429.6
9. 8469345.5 4424479.8
10. 8469393.7 4424486.1
11. 8469410.0 4424538.0
12. 8469392.2 4424567.9
13. 8469433.7 4424629.3
14. 8469505.3 4424738.6
15. 8469613.7 4424861.3
16. 8470178.5 4424725.2
17. 8470200.0 4424700.0
18. 8470006.0 4424590.0
19. 8469600.0 4424056.0
20. 8469500.0 4424040.0
Нор Уги
Арташатский канал
ПТФ


ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ARARAT MARZ
ՄԱՍԻՍ
MASIS
ԱՐՏԱՇԱՏ
ARTASHAT
ՎԵԴԻ
VEDI
ԱՐԱՐԱՏ
ARARAT
Մարզկենտրոնը ԱՐՏԱՇԱՏ
4 քաղաք, 94 բնակավայր
Մարզային նշանակության
ճանապարհների
երկարությունը՝ 405կմ
ARTASHAT the center
4 cities 94 settlements
Instate roads 405 km

Նկար 2.

Հանքավայրից 1.0-1.5կմ հեռավորության վրա անցնում է Արտաշատի ջրանցքը, իսկ հանքավայրից 0.8-1.0կմ հեռավորության վրա, հանքավայրին զուգահեռ՝ Գառնի-Արարատ ջրատարը:

Հանքավայրը գտնվում է բարենպաստ ճանապարհա-տրանսպորտային պայմաններում: Հանքավայրից 2.5կմ հեռավորության վրա անցնում է երկաթգիծը, իսկ Արարատ երկաթգծային կայարանի հետ հանքավայրը կապված է գրունտային և ասֆալտապատ ճանապարհներով (15կմ երկարությամբ): Հանքավայրից 3կմ հեռավորության վրա անցնում է Մ-2 Երևան–Երասխ-Գորիս-Մեղրի-ԻԻՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհը, որը հանդիսանում է Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի մի հատվածը:

Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարեր) հանքավայրի հարավ-արևմտյան սահմանից մոտ 2կմ հեռավորության վրա անցնում են Երևան-Եղեգնաձոր էլեկտրահաղորդման բարձրավոլտ գիծը և Երևան-Վեդի-Արարատ գազատարը:

Հանքավայրի շրջանում խոշորագույն քաղաքերն են Արարատը և Վեդին: Արարատ քաղաքի տնտեսության մասնագիտացման ճյուղը ծանր արդյունաբերությունն է: Այստեղ գտնվում է հանրապետության երկու ցեմենտի գործարաններից մեկը, որը ստեղծվել է տեղի կրաքարի հարուստ հանքավայրի հիման վրա: Արարատում է գտնվում ոսկու կորզման ֆաբրիկան: Քաղաքում կան նաև գինու-կոնյակի և պահածոների արդյունաբերության ձեռնարկություններ, որտեղ արտադրվում է գինի, կոնյակի սպիրտ, մրգերի, բանջարեղենի պահածոներ: Ունի զարգացած գյուղատնտեսություն: Այստեղ գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն խաղողի, պտղատու այգիները, վարելահողերը: Զբաղվում են պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ, ինչպես նաև կաթնամսատու ուղղության անասնպահությամբ, թռչնաբուծությամբ:

Վեդի քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, կարևոր տեղ է զբաղեցնում բնական քարերից երեսպատման նյութերի, էլեկտրական հսկիչ սարքերի ու սարքավորումների, պլաստմասաներից պատրաստվող շինարարական իրերի արտադրությունը: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը դաշտավարությունն է:

Հանրային ենթակառուցվածքների տեսակետից Արարատի մարզը գտնվում է բարենպաստ պայմաններում: Մարզի տարածքով է անցնում Երևան–Երասխ երկաթուղին և Մ-2 Երևան–Երասխ-Գորիս-Մեղրի-ԻԻՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհը, որը հանդիսանում է Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի մի հատվածը:

- ***Ռելիեֆ, երկրաձևաբանություն, սեյսմիկ պայմաններ***

Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը ներքևից վերև ներկայացված է հետևյալ հերթականությամբ.

- ***Պալեոզոյ. Վերին դևոն.*** Ամենահին ապարները ներկայացված են վերին ֆամենյան նստվածքներով, որոնք իրենց հերթին ներկայացված են տարբեր հատվածներում մարմարացված, սև կավերով խաչվող շերտերով, քվարցիտների շերտերով օրգանածին և օրգանածին-ճեղքավորված կրաքարերով: Այս շերտերի հզորությունը հասնում է 600 մ-ի: Այս նստվածքները մերկանում են բրախիանտիկլինալի միջուկում, որը տարածված է ՈԻրցի անտիկլինալի ծալքերում:
- ***Ստորին կարբոն.*** Վերին տուրնեյան և վիզեյան հարկերը ունեն լայն տարածում: Ստորին կարբոնի ապարները առանց ընդմիջման հերթափոխում են վերին դևոնի ապարներին և լայն տարածվում են ՈԻրցի անտիկլինալի երկու թևերում: Ստորին տուրենյան առաջացումները ներկայացված են մարմարացված կրաքարերով, քվարցիտներով, կավային թերթաքարերով և ավազաքարերով: Կտրվածքի վերին հատվածում տեղադրված են մարմարացված բիտում-օրգանածին վիզեյան հարկի կրաքարերը՝ բրախիոպոդ և կորալային ֆաունայով: Այս ապարները պարունակում են առանձին թոքր հզորությամբ ավազաքարերի շերտեր և առնձին կարմրավուն կավերի շերտեր: Ստորին կարբոնի առաջացումների հզորությունը 150-200մ է:

Պալեոզոյան առաջացումների ամենալայն տարածումն ունեն պերմի ապարները, որոնք տրանսգրեսիվ, լայն ընդմիջումներով, տեղ-տեղ անկյունային աններդաշնակությամբ ծածկում են ավելի հին առաջացումները, մինչև անգամ

ստորին կարբոնի վիզեյան հարկի ապարները: Ստորին պերմի առաջացումները ունեն լայն տարածում և հանդիպում են ՈՒրց-Հայոցձոր անտիկլինորիումի բոլոր անտիկլինալ ստրուկտուրաներում: Պերմի առաջացումների ողջ կտրվածքը մերկանում է Վեդի գետի միջին հոսանքներում՝ ներկայացված կրաքարերով, շերտաձև թերթաքարերով, մերգելային և ավազային կրաքարերով:

Ստորին պերմի առաջացումներին են վերագրվում նաև կարբոնատային կազմով մարմարացված միկրոբրեկչիաները: Նկարագրված առաջացումների հզորությունը հասնում է 220 մ-ի:

- ***Մեզոզոյ. Ստորին տրիաս.*** Այս առաջացումները նկարագրվող շրջանում լայն տարածում ունեն Վեդի գետի միջին հոսանքներում՝ Ախսուինյան անտիկլինալի թևերում: Տեղադրված են վերինպերմյան առաջացումների վրա և ներկայացված են 110 մետրանոց մանր շերտավոր մերգելային կրաքարերով:
- ***Վերին տրիաս.*** Այս հասակի առաջացումները տարածվքծ են Վեդի գետի վերին հոսանքներում և ներկայացված են մուգ մոխրագույն կրաքարերի հաստ շերտով, ավազաքարերով, ավազակավային թերթաքարերով: Այս առաջացումների հզորությունը հասնում է 80մ-ի:
- ***Վերին կավիճ.*** Կավճի առաջացումները տարածված են նկարագրվող շրջանի հյուսիսային և հյուսիս-արևելյան հատվածում: Կտրվածքի ստորին հատվածի առաջացումները ներկայացված են տուրոնի մոխրագույն և դեղնա-սպիտակավուն կրաքարերով՝ մերգելների շերտերով, ավազաքարերով և կավերով 100-150 մ հզորությամբ, որոնք աննկարդաշնակ ծածկում են պերմի առաջացումները:

Շերտագրական կտրվածքում տուրոնի առաջացումները փոխարինվում են վերին տուրոն-ստորին կոնյակի մանրհատիկային կանաչա-մոխրավուն դիաբազային պորֆիրիտներով, որոնք ունեն մինչև 100 մ հզորություն:

Ստորին կոնյակի ստորին հատվածը ներկայացված է պոլիմիկտային ավազաքարերի և մերգելների շերտով: Այս շերտի հզորությունը հասնում է 200 մ-ի:

- ***Վերին սենոն.*** Այս շրջանի առաջացումները տարածված են Երախ սարի շրջանում: Ներկայացված են կազային, կայծքարային մերգելներով և կրաքարերով: Սրանք աննկարդաշնակ ծածկում են վերին կոնյակի հասակի տերիգեն առաջացումները: Արևելյան հատվածում մերգելները ծածկված են դատ-պալեոցենի

ավազա-գլաքարային առաջացումներով: Մերգելների հաստվածքի սահմաններում նկատվում է անդեզիտա-տրախիտային կազմի ինտրուզիա, որը ստորին սենոնի հասակի է: Մերգելների հզորությունը տատանվում է 20-ից 400-450 մ:

Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարեր) հանքավայրը պատկանում է վերը նշված հաստվածքին, որը զբաղեցնում է 3 կմ² տարածք: Հանքավարի մերգելները պայմանականորեն բաժանված են 3 տիպի կամ շերտի.

• ***Առաջին տիպ-առաջին շերտ***. Կավային մերգելներ են, որոնք աննկարագրելի տեղադրված են վերին կոնյակի տերիգեն կոնգլոմերատների վրա: Սրանք տարբերվում են փոքր խտությամբ, ամրությամբ և մուգ մոխրագույն կանաչավուն գույնով: Հզորությունը տատանվում է 20-25 մ: Բնութագրվում են պելիտային ստրուկտուրայով: Ապարները կազմված են կալցիտի մանր կավային հատիկներով: Ապարներով հաճախ հանդիպում են թոքր կլորավուն միկրոօրգանիզմներ: Տարբեր հատվածներում առանձնանում են օրգանածին կավային մերգելներ: Սրանց ստրուկտուրան ալևրոլիտային է, որը ներկայացված է մանրահատիկային կավային մատերիալով, որը կազմում է ամբողջ զանգվածի 60-70%: Այս զանգվածում տարածված են միկրոօրգանիզմների մնացորդներ՝ լցված մանրահատիկ կարբոնատով: Բացի այդ ապարում երբեմն հանդիպում են հանքային մինիերալի կտորներ: Այս ապարների քիմիական կազմը ներկայացված է աղյուսակում

	SiO_2	Fe_2O_3	TiO_2	Al_2O_3	CaO	$CaCO_3$	ԿՇՊ
նվազագույն	15.67	1.59	0.15	3.55	33.31	59.48	26.04
առավելագույն	24.97	3.05	0.35	6.78	41.5	76.24	33.40
միջինը	18.86	2.20	0.28	4.62	39.99	71.41	31.84

• ***Երկրորդ տիպ-երկրորդ շերտ***. Կրաքարային մերգելներ, որոնք ամենատարածվածն են: Սրանք տեղադրված են վերը նկարագրված կավային մերգելների վրա: Մակրոսկոպիկ կրաքարային մերգելները հոծ, բարակ և մանրահատիկային վարդագույն, դեղնա-մոխրավուն ապարներ են: Սրանց մեջ

առանձնանում են բարակ շերտավոր մինչև 1 սմ հզորությամբ, միջին՝ 1-2 սմ և հաստ շերտավոր մինչև 0.5-0.7մ: ՈՒնեն մանրահատիկային ստրուկտուրա: Ապարները հիմնականում կազմված են մանրահատիկային կալցիտից և հազվադեպ կավային մատերիալից: Կրաքարային մերգելների հզորությունը տատանվում է մի քանի մետրից մինչև 160 և ավելի: Քիմիական կազմը ներկայացվում է ստորև.

	SiO_2	Fe_2O_3	TiO_2	Al_2O_3	CaO	$CaCO_3$	ԿՇՊ
նվազագույն	12.45	0.96	0.03	1.94	43.36	77.43	34.43
առավելագույն	17.82	1.23	0.15	2.88	46.05	80.94	36.22
միջինը	15.27	1.08	0.08	2.33	44.66	79.75	35.29

• ***Երրորդ տիպ-երրորդ շերտ***. Սրանք նույնպես կրաքարային մերգելներ են, որոնք իրենց մեջ պարունակում են մաքուր կրաքարերի 1-ից մինչև 15-20 մ-ի հասնող ավազաքարերի շերտեր: Սրանք հիմնականում հանդիպում են հանքավայրի արևմտյան հատվածում, որտեղ այս շերտի հզորությունը հասնում է 150 և ավել մ-ի: Այս ապարները քիչ են տարբերվում երկրորդ շերտի ապարներից: Սրանք նույնպես հոծ, ամուր, մոխրագույն, դաեղնավուն գույնի են: Ստրուկտուրան մանրահատիկային է: Երկրորդ շերտի ապարներից տարբերվում են նրանով, որ սրանց մեջ հանդիպում են հոծ, մանրահատիկ ստրուկտուրայով մոխրագույն մաքուր կրաքարերի ենթաշերտեր: Կրաքարերի ենթաշերտերը ունեն օրգանածին ստրուկտուրա: Բաղկացած են մանրահատիկ կալցիտից և միկրոօրգանիզմների մնացորդներից: Կրաքարերում հաճախ հանդիպում է կավային նյութ:

Սրանց քիմիական կազմը ներկայացված է ստորև.

	SiO_2	Fe_2O_3	TiO_2	Al_2O_3	CaO	$CaCO_3$	ԿՇՊ
նվազագույն	10.88	0.66	0.06	1.53	46.12	82.36	36.84
առավելագույն	12.64	1.06	0.12	2.44	48.07	85.84	37.80

միջինը	11.84	0.86	0.1	1.79	47.29	84.45	37.28

• ***Կայենզոյ***. Կայենեզոյի ապարները ունեն լայն տարածում և հիմնականում կազմում են սինկլինալների ծալքերը: Հիմքում տեղադրված են ստորին էոցենի առաջացումները՝ 50մ հզորությամբ, որոնք ներկայացված են կրաքարերով, կրաքարացված մանրաբեկորային կոնգլոմերատներով, կրաքարացված ավազաքարերով և տուֆոավազաքարերով:

Այս առաջացումները ներդաշնակ ծածկված են միջին էոցենի մինչև 1000 մ հզորության հասնող նստվածքային առաջացումներով, որոնք ներկայացված են տուֆիտներով, տուֆոավազաքարերով, տուֆակոնգլոմերատներով, պորֆիրիտներով և հազվադեպ կավերով: Ավելի լայն տարածում ունեն ավազաքարերը, կրաքարերը ը կավերը, ինչպես նաև վերին էոցենի կոնգլոմերատները, որոնց հզորությունը հասնում է 500 մ-ի, որոնց ելքերը հանդիպում են շրջանի հյուսիսային հատվածում:

Նկարագրված առաջացումները վերևում փախարինվում են օլիգոցենի առաջացումներով: Վերջիններս տարածված են շրջանի կենտրոնական և հյուսիսային հատվածներում: Ներկայացված են մոխրագույն կավերով, ավազաքարերով և կրաքարերով, կավային ավազաքարերով, կոնգլոմերատներով: Ամբողջ շերտի հզորությունը հասնում է 1000 մ-ի: Օլիգոցենի առաջացումները ծածկված են վերին միոցենի տուֆաբրեկչիաներով և տրախիլիպարիտների և տրախիդացիտների տուֆերով, ինչպես նաև անդեզիտադացիտներով:

Շերտագրական կտրվածքում սրանց վրա տեղադրված են վերին միոցեն միջին պլիոցենի տրախիլիպարիտների տուֆերը, տրախիտները, անդեզիտների և անդեզիտաբազալտների տուֆաբրեկչիաները, օբսիդիանները, պեռլիտները, որոնց հզորությունը հասնում է 100 մ-ի: Նկարագրված ապարները շրջանի հարավային մասում կտրված են վերին պլիոցենի գլաքարերով:

Ավելի լայն տարածում ունեն վերին չորրորդականի տրավերտինները և ժամանակակից ալուվյալ-դելուվյալ, պրոլուվյալ առաջացումները: Տրավերտինները մերկանում ենհիմնականում շրջանի հյուսիս-արևմտյան հատվածում և զբաղեցնում են մինչև 15 կմ^2 տարածք մինչև 50մ հզորությամբ:

Ստորև ներկայացվում է հայցվող տարածքի ռելիեֆի ձևագրական տիպերի սխեմատիկ քարտեզը՝



Նկար 3



Նկար 4.

Լանջերի թեքությունների անկյունները տատանվում են հիմնականում 5-19° սահմաններում, Վեդի և Կոտուց գետերի հովիտներում ձևավորվել են մեղմաթեք հարթավայրեր:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ հանքավայրի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² գրունտի հորիզոնական արագացման մեծություն (նկար 5):

Հանքավայրի տարածքում սողանքային մարմիններ չեն արձանագրվել: Մոտակա սողանքային մարմնների և հայցվող տեղամասի միջև նվազագույն հեռավորությունը կազմում մոտ 7,0 կմ:

Ստորև ներկայացվում է սողանքային երևույթների տարածման սխեմատիկ քարտեզը՝


ՎԵՂԻ
ԱՐԱՐԱՏ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Սողանքներ
Խոշոր սողանքային տարածքներ
Հողմահարման գոտիներ
Ջերմաքիմիական
Ջերմակենսաքիմիական
Ջերմաստատամանիքային
Նեոտեկտոնական բարձրացումների հավասարագծեր (կմ)
Տեկտոնական խախտումներ
Ավազանների սահմաններ
Սևանա լճի
Գետային երկրորդ կարգի
Գետային երրորդ կարգի
Գետային չորրորդ կարգի



Նկար 5.

Հանքավայրի տարածքը ներառված է բարեխառն, տաք ամառով կլիմայական գոտում (նկար 6):



Նկար 6.

Տարածքի կլիմայական բնութագրերը (ջերմաստիճան, հարաբերական խոնավություն, տեղումներ) ներկայացվում են ըստ մոտակա Վեդի և Ուրցաձոր, ինչպես նաև Արտաշատ օդերևութաբանական կայանների բազմամյա դիտարկումների արդյունքների:

Աղյուսակ 2.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջինտարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն,° C
Վեդի օդերևութաբանական կայան														
-2.6	0.2	6.7	12.7	18.1	22.0	26.7	26.6	22.8	15.5	7.6	0.2	13.0	-26	42
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ուրցաձոր օդերևութաբանական կայան														
4.0	-2.8	0.5	6.4	10.9	13.8	16.4	16.5	13.0	8.6	3.2	-1.3	6.8	-29	35

Արտաշատ	-3.6	-0.9	5.6	12.7	17.5	21.5	25.3	24.8	19.8	13,0	6,0	-0.6	11.8	-29	43

Աղյուսակ 3.

Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Վեդի օդերևութաբանական կայան											
72	68	61	51	50	56	45	30	40	56	65	80
Ուրցաձոր օդերևութաբանական կայան											
74	69	60	55	56	50	47	45	46	56	66	74

Արտաշատ	78	73	63	58	59	54	51	52	57	68	73	79	64	64	32

Աղյուսակ 4.

Տեղամների քանակը միջին ամսական/օրական առավելագույն, մմ												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	միջին
Վեղի օդերևութաբանական կայան												
19	14	21	45	46	30	19	4	13	30	29	16	286
19	13	23	24	36	22	17	5	13	14	22	14	36
Ուրցաձոր օդերևութաբանական կայան												
26	29	40	51	53	32	17	11	13	30	33	25	360
25	29	45	41	37	40	32	31	35	32	51	28	51

Արտաշատ	18	18	27	36	40	25	11	6	10	22	24	17	254
	18	20	32	36	43	34	27	22	28	36	31	25	43

Քամի
|
Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Անիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների Միջին արագությունը, մ/վ								Անհողմություններին կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ)օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «n» տարիների ընթացքում		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Արտաշատ	920,2	հունվար	7	8	10	20	12	10	15	18	88	0,3	0,4	7	21	24	26
			1,7	1,7	2,7	3,1	2,4	2,0	2,2	1,7							
		ապրիլ	4	9	12	27	13	8	13	14	74	0,6					
			1,7	1,8	2,1	2,8	2,5	2,8	2,8	2,6							
		հուլիս	8	7	9	16	9	9	18	24	80	0,4					
			1,7	1,9	1,7	2,0	2,0	2,0	2,7	2,3							
		հոկտեմբեր	7	12	12	19	8	10	16	16	85	0,3					
			1,6	1,5	2,1	2,0	1,5	2,1	2,4	2,0							

- ***Մթնոլորտային օդ***

Հանքավայրին հարակից տարածքներում չկան խոշոր արդյունաբերական կամ գյուղատնտեսական ձեռնարկություններ:

Տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածության մշտադիտարկումներ չեն կատարվում: Ամենամոտ գտնվող մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայանը գտնվում է Արարատ քաղաքում: Կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է ակտիվ նմուշառման մեկ դիտակայան և պասիվ նմուշառման 12 դիտակետ:

Հանքավայրի տարածքում օդային ավազանների աղտոտվածության մասին որոշակի պատկերացում է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի» կենտրոն ՊՈԱԿ կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Տեղամասի տարածքին մոտ գտնվող բնակավայրերում մշտական բնակչությունը ըստ պաշտոնական տվյալների չի գերազանցում 10000 մարդ:

Աղյուսակ 5.

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

Ըստ ուղեցույցի, մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Արտաշատ համայնքը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

Փոշի՝ 0.2 մգ/մ³;

Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;

Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;

Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

Օդի որակի նորմեր

Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված Նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) համեմատությամբ:

Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց

Բոլոր քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին շաբաթական, միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.meteomonitoring.am ինտերնետային կայքում:

Ստորև ներկայացվում է մթնոլորտային օդում որոշված նյութերի կոնցենտրացիաներն՝ ըստ քաղաքների:



Գծապատկեր 1. Ծծմբի երկօքսիդի պարունակությունը քաղաքներում 2022 թվականին



Գծապատկեր 2. Ազոտի երկօքսիդի պարունակությունը քաղաքներում 2022 թվականին



Գծապատկեր 3. Փոշու պարունակությունը քաղաքներում 2022 թվականին

2022 թվականին Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր քաղաքների փոշում որոշված մետաղներից նիկելի, մոլիբդենի և կոբալտի պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները, մնացած մետաղների համար ՍԹԿ-ները բացակայում են:

Ստորև ներկայացվում է փոշու մեջ որոշված մետաղների միջին տարեկան կոնցենտրացիաներն ըստ քաղաքների.



Գծապատկեր 4. Մետաղների պարունակությունը բաղարձներում 2022 թվականին

Աղմուկի մակարդակ և թրթռում

Ներկայացվող տեղանքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, սակայն, քանի որ դրանց երթևեկության ինտենսիվությունը շատ ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ:

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Աղմուկի առավելագույն թույլատրելի ցուցանիշները ըստ այդ բերված են աղյուսակում

ՀՀ սահմանված աղմուկի նորմերը

Աղմուկի առավելագույն թույլատրելի մակարդակը

Ընկալիչ	Ժամեր	dBLAEQ	dBLAMAX
Բնակելի և հասարակական շենքերի մոտ	06:00-22:00	55	70
	22:00-06:00	45	60

- ***Ջրային ռեսուրսներ***

Շրջանի հիմնական ջրային երակը Վեդի գետն է, Արաքսի ձախակողմյան վտակներից: Սկիզբ է առնում Դահնակի լեռնաշղթայի ու Գնդասարի լեռնազանգվածի միջև գտնվող Մժկատար լեռների հյուսիսահայաց լանջերից՝ մոտ 2700մ բարձրություններից: Սկզբում հոսում է դեպի հյուսիս-արևմուտք, հետո ընդհանուր ուղղությունը արևմտյան է: Այս ընթացքում գետը ունի լեռնային բնույթ: Այնուհետև գետահովիտը լայնանում է, հոսքի ուղղությունը թեքվում դեպի հարավ-արևմուտք: Ի վերջո գետը դուրս է գալիս Արարատյան դաշտ ու թափվում Արաքսը: Երկարությունը մոտ 58կմ է, ջրահավաք ավազանի մակերեսը 633կմ: Ձախակողմյան խոշոր վտակը Շաղափն է: Աջակողմյան՝ 10կմ-ը գերազանցող վտակները չորսն են, որոնցից մեկը

Խոսրովն է: Սնումը հիմնականում ձնանձրևային է, հորդացումը գարնանը: Ուրցաձոր դիտակայանում Վեդի գետը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով՝

Աղյուսակ 6.

Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ^2	Բազմամյա միջին տարեկան ելքը, մ^3/վ	Հոսքի մոդուլը, լ/վ*կմ^2	Հոսքի շերտը, մմ	Հոսքի ծավալը, մլն.մ^3/տ	Առավ. ելքը, մ^3/վ	Նվազ.ելքը, մ^3/վ
36	1,75	5,16	163	51,2	72,0	-

Հանքավայրի հայցվող տարածքից Վեդի գետը հոսում է մոտ 7.5կմ հարավ-արևելք: Վեդի գետի ջրերի որակի մոնիտորինգի մոտակա դիտակետը գտնվում է Ուրցաձոր գյուղից վերև: Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2- րդ դաս):

Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարեր) հանքավայրի տարածքում ստորերկրյա ջրերի հորիզոններ չկան, բոլոր հետախուզական փորվածքները, ինչպես նաև փորձնական արդյունահանման բացահանքը ջրազուրկ են: Միաժամանակ, հանքավայրի տարածքը սահմանազատված է ոչ խորը, ժամանակավոր հոսք ունեցող ձորակներով, որոնք հանդիսանում են բնական դրենաժներ: Դրանցով է հեռացվում մթնոլորտային տեղումներից հանքավայրի տարածքում առաջացող մակերևութային հասքերը:

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային, այդ թվում նաև Սևանա լճի ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի 75-Ն որոշման: Գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3- րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը

«լավ»-ից «անբավարար» որակի է (2-4-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ գետին

խառնվելու արդյունքում դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ նիտրիտ իոններով:

ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը

2022 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 39%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 18%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 33%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):



Գծապատկեր 2. Գետերի և ջրամբարների ջրի որակի նկարագիրը



Գծապատկեր 3. Գետերի ջրի որակի նկարագիրն ըստ ՋԿՏ-ների, 2022 թ.

.

ՀՀ մակերևութային ջրերի որակը / 2022 թվական


N
Սևանա լիճ
ԵՐԵՎԱՆ
Գյումրի
Վանաձոր
Էջմիածին
Աշտարակ
Արմավիր
Արտաշատ
Եղեգնաձոր
Մարտունի
Արարատ
Ապարանի ջրամ.
Ապարանի ջրամ.
Ուրցի ջրամ.
Ուրցի ջրամ.
Ուրց

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի բնութագրիչ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Արարատյան	Վեդի	0.5 կմ գյ. Ուրցաձորից վերև (80)	-	2-րդ	2-րդ
		6 կմ ք. Արարատից ներքև (82)	ԹՔՊ, մոլիբդեն, կոբալտ, բարիում, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, սուլֆատ իոն	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, մանգան, ալյումին	4-րդ	
			Ամոնիում իոն, երկաթ, ԿՀՆ	5-րդ	
	Արփա	0.5 կմ ք. Ջերմուկից վերև (83)	Երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Վայքից վերև (84)	Երկաթ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Վայքից ներքև (85)	Մոլիբդեն, երկաթ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Եղեգնաձորից վերև (86)	Մոլիբդեն, երկաթ, բարիում	3-րդ	3-րդ
		0.5 կմ գյ. Արենիից ներքև (87)	Մոլիբդեն, երկաթ, բարիում	3-րդ	3-րդ
	Դարք	Անունք (348)	Երկաթ, բարիում, ալյումին, ծարիր	3-րդ	3-րդ
		Գետաբերան (349)	Կոբալտ	4-րդ	5-րդ
			Մանգան	5-րդ	
	Հերհեր	Գետաբերան (351)	Մոլիբդեն	3-րդ	3-րդ
	Եղեգիս	գյ. Գետինվանքից վերև (352)	Երկաթ	3-րդ	3-րդ

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Արարատ քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ իոնով, մանգանով և ալյումիով:



- *Հողեր*

Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարեր) հանքավայրի շրջանի տարածքում զարգացած են կիսաանապատային գորշ, շագանակագույն, ռոգելի մնացորդային-մարգագետնային և աղուտ-ալկալի տիպիկ հողերը (նկար 7):

Նկար7.

ՀՈՂԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



① Մուգ-շագանակագույն քարքարոտ փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
② Շագանակագույն քարքարոտ փոքր հզորության կավավազային միջին հողմահարված
③ Բաց-շագանակագույն մնացորդային-կարբոնատային փոքր հզորության կավավազային միջին-ուժեղ հողմահարված
④ Գորշ կիսաանապատային տիպիկ մնացորդային-կարբոնատային փոքր հզորության կավավազային միջին հողմահարված
⑤ Գորշ կիսաանապատային տիպիկ մնացորդային-կարբոնատային վերափոխված միջին հզորության կավավազային մշակովի
⑥ Ռոգելի մնացորդային-մարգագետնային գորշ խորը պրոֆիլային հզոր կավային
⑦ Ռոգելի մնացորդային-մարգագետնային գորշ խորը պրոֆիլային հզոր կավավազային
⑧ Ռոգելի մնացորդային-մարգագետնային գորշ թույլ կարբոնատային միջին հզորության կավավազային
⑨ Ռոգելի մնացորդային-մարգագետնային գորշ գլաքարային միջին հզորության կավավազային
⑩ Ռոգելի մարգագետնային-գորշ խորքային աղուտ-ալկալի սոդային-քլորիդային հզոր կավավազային
⑪ Ռոգելի մարգագետնային-գորշ խորքային աղուտ-ալկալի սոդային-քլորիդային միջին հզորության կավավազային
⑫ Ռոգելի մարգագետնային-գորշ խորքային աղուտ-ալկալի միջին հզորության կավավազային
⑬ Աղուտ-ալկալիներ մարգագետնային սոդային-քլորիդային կավային
⑭ Աղուտ-ալկալիներ մարգագետնային սոդային-քլորիդային կավավազային
⑮ Արմատական ապարների ելքեր

Սակայն բուն հանքավայրի տարածքում հողաբուսական շերտը բացակայում է: Հանքավայրի ողջ մակերեսը ներկայացված է Էոցենի հասակի կրաքարերի բնական մերկացումներով, ժայռային ելուստներով, ռելիեֆի դրական ձևերով:

Հայցվող տարածքում մինչև նախատեսվող գործունեությունն իրականացնելը՝ նախկինում որևէ աշխատանքներ իրականացված չեն Հայցվող տարածքի հողերն աղտոտված չեն: Հարակից տարածքներում առհասարակ բացակայում են անտառային հողերը:

- ***Բուսական և կենդանական աշխարհ***

Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարեր) հանքավայրի շրջանում տարածված է հիմնականում տափաստանային տարախոտային բուսականությունը, որի կազմում զգալի մաս են կազմում վաղամեռ բուսատեսակները (նկար 9):

Բուն հանքավայրի տարածքը գործնականում զուրկ է բուսական ծածկույթից, քանի որ կրաքարերի մակերեսին հողաբուսական շերտ չի ձևավորվել: Առանձին, նոսր կղզյակների տեսքով քարերի ճաքերում, ստվերոտ հատվածներում հանդիպում են ուրցը, օշինֆրը, անմեռուկը, գազը, խոզանափուշը և ալեհեր լերդախոտը: Այդ սակավ բուսականությունը, ամռան շոգ եղանակները սկսելուն պես, չորանում է, իսկ տարածքը վերածվում է կիսաանապատային լանդշաֆտի:

Հանքավայրի տարածքում աճող բուսականության կարգավիճակը պարզաբանելու նպատակով կատարվել է ՀՀ բույսերի կարմիր գրքի տվյալների վերլուծություն: Հանքավայրին հարակից բնակավայրի (շուրջ 4.8կմ հեռավորության վրա) շրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- ստեպտորամֆուս պարսկական (լատ.՝ Steptorhamphus persicus) – վտանգված տեսակ, աճում է միջին լեռնային գոտում 1200-1400մ բարձրություններում, ժայռոտ չոր լանջերին և խճաքարոտ քարաթափվածների վրա, պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելավայրում,

- կուրկուրան կարճաթև (լատ.՝ Hedysarum micropterum), - խոցելի տեսակ, աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում 700-1800մ բարձրությունների վրա, չոր քարքարոտ, կավային և ավազային հողերի վրա, պահպանության միջոցառումներ չեն իրականացվում,

- սզնի, ալոճ պոնտական (լատ.՝ Crataegus pontica) – խոցելի տեսակ, աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում 800-1800մ բարձրությունների վրա, չոր քարքարոտ լանջերին, կաղնու և գիհու նոսրանտառներում, պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելավայրում:

ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված՝ Քնձմնձուկ իզոպիրոնման- Thalictrum isopyroides, Գազ Մասսալսկու – Artragalus massalskyi Grossh., Կղմուխ Օշեի-Inula aucheriana DC. (= I. seidlitzii Boiss.) և Գազ վեդու-Astragalus vedicus Takht. (= Astragalus karabaghensis Bunge subsp. Vedicus (Takht.) տեսակների տարածման արեալը հանդիսանում է Երևանի ֆլորիստիկ շրջանը:

Հանքավայրի տարածքում դիտարկված բուսական տեսակները չեն հանդիսանում ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված, պահպանվող բուսատեսակներ:

Նկար 8.


ԹՈՒՃԼՈՒՃԱ
ԻԳԴԻՐ
ՄԱՍԻՍ
ԱՐՏԱՇԱՏ
ՎԱՐԴԵՆԻԿ
ԿԵՆԴԱՆԱՏԵՍԱԿՆԵՐ
Ողնաշարավորներ
Վայրի ոչխար (մուֆլոն)
Բեզոարյան այծ
Եվրոպական այծյամ
Ազնվացեղ եղջերու
Վայրի խոզ
Գորշ արջ
Ընձառյուծ
Լուսան
Եղջնակատու
Շերտավոր բորենի
Շնագայլ
Ջրասամույր
Գորշուկ
Մացառախոզ
Մշկամուկ
Ճահճակուղբ
Սկյուռ
Դասաստակ
Թխակապույտ աղավնի
Կռնչան բադ
Արծաթափայլ որոր
Միջերկրածովյան կրիա
Գյուրզա
Սխտորագորտ
Սովորական տրիտոն
Սիգ
Անտառային կատու
Կաքավ
Անողնաշարավորներ
Անատամ
Խեցգետին
Խաղողի խխունջ
Հանդիպում են ամենուր.
Ողնաշարավորներից՝ լճագորտ, ժայռային մողես, սովորական յորտու, տնային ճնճղուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակական դաշտամուկ, մոխրագույն առնետ, գայլ, աղվես, բարակզգաքիս, աքիս
Անողնաշարավորներից՝ անձրևատրոդ, ծովախեցգետին, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճռիկ, մորեխ, փայտոջիլ, կապտաթիթեռ, կաղամբաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր
Կաքավ
Մուֆլոն



Նկար 9.

Հանքավայրի շրջանի կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Սողուններից հանքավայրի շրջանում հանդիպում է կույր օձուկը և սահնօձը: Կաթնասուններից շրջանում հայտնի են գայլ և աղվես: Ժայռերում դիտվել են չղջիկներ: Հանքավայրի տարածքում ապրիլ ամսին կատարված դիտազննումների արդյունքներով խոշոր կաթնասուների բներ, որջեր չեն արձանագրվել: Բազմաթիվ են հատվածոտանիները՝ կարիճները, սարդեր:

Տարածքով դիտվել է մոխրագույն և կաչաղակի թռիչք, բայց թռչունների բներ հանքավայրի տարածքում չեն դիտարկվել:

Հանքավայրի տարածքում հանդիպող կենդանիների կարգավիճակը պարզաբանելու նպատակով կատարվել է ՀՀ կենդանիների կարմիր գրքի տվյալների վերլուծություն: ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի շրջակայքում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- կպչունի իլիկաթիթեռ (լատ.՝ Hyles hippophaes) – խոցելի տեսակ, ապրելավայրերը՝ անապատ, կիսաանապատ, գիհու նոսրանտառներ, Eleagnus angustigolia մացառուտներ, պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելավայրում,

- երկարառոտ սցինկ (լատ.՝ Eumeces schneideri) - խոցելի տեսակ, ապրելավայրերը՝ խիստ քարքարոտ, չորասեր բուսականությամբ կիսաանապատային տեղանքում, պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելավայրում:

ՀՀ կենդանիների կարմիր գրքում նշված այս երկու տեսակը հանքավայրի տարածքում չեն հանդիպում:

- ***Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ***

Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարեր) հանքավայրից մոտ 9,8կմ հեռավորության վրա գտնվում է «Գոռավանի ավազուտներ» արգելավայրը: Արգելավայրում բուսականության հիմնական տիպը ավազային ջուզգունային անապատն է: Սա միակ տեղամասն է Փոքր Կովկասում որտեղ ներկայացված են ջուզգունի համակեցությունները, և խիստ հազվագյուտ է ողջ Կովկասի համար: Արգելավայրը անոթավոր բույսերի հազվագյուտ և անհետացող տեսակների բացարձակ թվաքանակով Հայաստանում գտնվում է առաջին տեղում (10 տեսակներ գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում): Ընդհանուր առմամբ արգելավայրի տարածքում աճում են 160 տեսակի անոթավոր բույսեր: Էնդեմիկ ներկայացուցիչներից են Salsola tamamschjanae, Acantholimon araxanum: Այստեղ աճում են նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և արժեքավոր մի շարք այլ տեսակներ: Ողնաշարավորների ֆաունան հաշվվում է մոտ 20 տեսակ: Տարածքից հայտնի են Հայաստանի համար էնդեմիկ հանդիսացող 12 տեսակ բզեզներ:

Հանքավայրից մոտ 10կմ արևելք-հյուսիս-արևելք գտնվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, որը հիմնադրվել է 1958 թվականին: Արգելոցը

գտնվում է Արարատի մարզում Արարատյան դաշտի հարևանությամբ՝ Գեղամա լեռնաշղթայի լեռնաբազուկների, Երանոսի և Երախի լեռների վրա, երևակման տարածքից ավելի քան 20կմ հեռավորության վրա: Այն զբաղեցնում է 23213.5հա տարածք, տեղակայված է ծովի մակարդակից 700-ից մինչև 2800 մ բարձրության վրա: Արգելոցի բուսական աշխարհը ներառում է անոթավոր բույսերի 1849 տեսակ: Ավելի քան 80 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, իսկ 24 տեսակը էնդեմիկ են: Արգելոցի տարածքի 16%-ը անտառածածկ է: Բացատները, թփուտները և մացառուտները զբաղեցնում են տարածքի մետ 20%-ը: Տարածքի մնացած 64%-ը զբաղեցնում են լեռնային քսերոֆիտների տարբեր տիպի համակեցություններ:

Կենդանական աշխարհը ներառում է կաթնասունների՝ 41, թռչունների՝ 192, սողունների՝ 33, երկկենցաղների՝ 5 և ձկների՝ 9 տեսակներ: Արգելոցի ժայռային, քարքարոտ, խիստ թեքություն ունեցող սարալանջերը ապրելավայր են հանդիսանում գորշ արջի (Ursus arctos syriacus), բեզոարյան այծի (Capra aegagrus), կովկասյան ընձառյուծի (Panthera pardus ciscaucasica) համար, որոնք գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում:

Արգելոցի առանձնահատկություններից է նաև պատմական և մշակութային հարուստ ժառանգությունը՝ սկսած վաղնջական ժամանակներից: Տարածքը սերտորեն կապված է հայ ժողովրդի պատմության և պատմական անցյալի փառահեղ դրվագների հետ՝ սկսած բազմաստված հեթանոսական և հելլենիստական մշակույթի շրջաններից: Արգելոցում մինչ օրս պահպանվում են բազմադարյան պատմություն ունեցող մշակութային կոթողներ, պատմաճարտարապետական հուշարձաններ, բույսերի և կենդանիների եզակի տեսակներ, լանդշաֆտների հիասքանչ բազմազանություն:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են համարվում նաև բնության հուշարձանները: ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ:

ՀՀ Արարատի մարզում հաշվառված են բնության հետևյալ հուշարձանները.

Աղյուսակ 7.

		<u>ՀՀ Արարատի մարզ</u>	

24.	«Անձավիկ» քարանձավ	Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակուն գետի աջ ափին, Դարանդ գետի հետ միախառնման տեղից 08 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա	Երկրաբանական հուշարձան
25.	«Դաշտաքար» քարանձավ	Դաշտաքար գյուղից 02 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա	Երկրաբանական հուշարձան
26.	«Մեծ հոր» համակարգ անձավային համակարգ»	Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա	Երկրաբանական հուշարձան
27.	«Անանուն» շերտավոր նստվածքներ	Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա	Երկրաբանական հուշարձան
28.	«Անանուն» անտիկլինալ ծալք	Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)	Երկրաբանական հուշարձան
29.	«Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)	Երկրաբանական հուշարձան
30.	«Անանուն» ծալքագոյացման մերկացում	Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս., Վեդի գետի աջ ափին	Երկրաբանական հուշարձան
31.	«Հորթունի» բրածո ֆլորա	Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ.	Երկրաբանական հուշարձան
32.	«Ջերմանիսի» բրածո ֆլորա	Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Ջերմանիս գյուղատեղիի մոտակայքում	Երկրաբանական հուշարձան
33.	«Վեդի գետի ավազանի» բածո ֆաունա	Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ.	Երկրաբանական հուշարձան
34.	«Աղակալած ճահճուտ»	քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա	Կենսաբանական հուշարձան
Ընդամենը՝ ՀՀ Արարատի մարզում -11			Երկրաբանական – 10 Կենսաբանական – 1

Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարեր) հանքավայրին ամենամոտ գտնվող բնության հուշարձանները ունի նվազագույնը՝ 7,8կմ հեռավորություն:

Սանիտարա-պաշտպանիչ գոտի

Համաձայն 245-71 սանիտարական նորմերի, 6-7-րդ դասի /категорий/ լեռնային ապարների հանքավայրերի համար սանիտարա-պաշտպանիչ գոտու մեծությունը կազմում է 50.0մ:

- ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
- ***Ենթակառուցվածքներ***

Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարեր) հանքավայրի հայցվող տեղամասը տարածական առումով գտնվում է ՀՀ Արարատի մարզի Արտաշատ խոշորացված համայնքի Այգեզարդ բնակավայրի վարչական սահմաններում:

Մարզի ընդհանուր տարածքը՝ 2096քկմ է, կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքի 7 %-ը:

Մարզն ունի շուրջ 256.6 հազար բնակչություն, որից 72.1 հազ. քաղաքաբնակներ են (28%), 184.5 հազարը՝ գյուղաբնակ (71%): Մարզը բնակչությամբ գրեթե միատարր է, հիմնականում բնակեցված է հայերով՝ 93%, ազգային փոքրամասնություններից մարզում ապրում են եզդիներ 2.5%, ասորիներ 0,09%, քրդեր 0.05%, ռուսներ 0.4%:

01.01.2020թ. դրությամբ մարզի մշտական բնակչությունը ըստ տարածաշրջանների հետևյալն է՝ Արարատ 20.4 հազար մարդ, Արտաշատ 19.3 հազար մարդ, Մասիս 20.6 հազար մարդ, Վեդի 11.8 հազար մարդ:

Արարատի մարզում բնակչության տեղաբաշխումը հավասարաչափ չէ, ամենամեծ կուտակումը մարզում Արտաշատի և Մասիսի տարածաշրջաներում են՝ հիմնականում հարթավայրային մասում դեպի մայրաքաղաքի ուղղությամբ, դեպի նախալեռնային և լեռնային բնակավայրեր՝ բնակչության խտությունը կտրուկ նվազում է:

Արարատի մարզում տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 69.3%, որը հանրապետական միջին ցուցանիշից բարձր է 6.8%-ով: Տարբերություններ կան

տղամարդկանց (71.7%) և կանանց (65.2%), ինչպես նաև քաղաքային (44%) և գյուղական (82%) տարածքների միջև: Համեմատած Արմավիրի մարզի հետ տնտեսական ակտիվության մակարդակը բարձր 1.7%-ով:

ՀՀ Արարատի մարզում առկա են 7087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 11.6%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 274, իսկ Արմավիրի մարզում առկա են 9087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 14.9%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 341: Ինչպես և ՀՀ բոլոր մարզերում այստեղ նույնպես ձեռնարկությունների գերակշռող մասը ունի մի քանի աշխատող և կարող են համարվել ՓՄՁ ձեռնարկություններ:

Մարզի տնտեսության հիմնական ցուցանիներն ըստ ՀՀ տնտեսության ճյուղերի հետևյալն են՝

արդյունաբերություն՝ 12.9%, գյուղատնտեսություն ՝ 14.1%, շինարարություն՝ 2.1%, մանրածախ առևտուր՝ 2.7 %, ծառայություններ՝ 1.6 %:

Մարզը Հայաստանի արդյունաբերական և գյուղանտեսական առաջատարներից է՝ այստեղ մեկ շնչի հաշվով արտադրվող արդյունաբերական արտադրանքը ավել է քան ՀՀ միջին ցուցանիշը շուրջ 1.5 անգամ, իսկ գյուղատնտեսական արտադրանքը շուրջ 1.6 անգամ, այլ ոլորտներում մարզը զգալիորեն զիջում է ՀՀ միջին ցուցանիշներին:

Արդյունաբերություն Արարատի մարզը Հայաստանի Հանրապետության զարգացած արդյունաբերական մարզերից է: ՀՀ արդյունաբերության ծավալի 12.9%-ը կազմում է Արարատի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը: Արարատի մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն գինու-կոնյակի 10-ից ավելի խոշոր գործարանները, “Արարատ–ցեմենտ”, “Ոսկու կորզման ֆաբրիկան”, Արտաշատի, Արարատի պահածոների, “Մասիս տոբակո”, “Ինտերնեշնլ Մասիս տոբակո” գործարանները:

Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների, արտադրություններն են և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ 3 ճյուղերը.

1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն)

2) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա)

3) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ազբոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

Մարզի արդյունաբերական արտադրության 92.3%-ը բաժին է ընկել մշակող արդյունաբերությանը, որը հիմնականում գյուղմթերքի վերամշակությունն է և որը մեծապես պայմանավորված է մարզում գյուղատնտեսական բարձր արտադրողականությանբ:

Արդյունաբերական արտադրանքի ծավալների վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8.

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով,[1] մլն.դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով,[1]մլն.դրամ	Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
Ամբողջ արդյունաբերությունը	**296 758.9**	**317 232.0**	**112.0**
այդ թվում՝			
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	**1 124.6**	**1 445.6**	**99.0**
այդ թվում՝			
հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	1 124.6	1 445.6	99.0
Մշակող արդյունաբերություն	**284 560.9**	**304 713.0**	**112.6**
որից՝			
սննդամթերքի արտադրություն	42 177.5	40 900.8	98.9
խմիչքների արտադրություն	32 767.1	32 787.2	168.8
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	82 602.1	82 791.1	107.7
հագուստի արտադրություն	696.3	696.3	157.2
թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	22 341.7	22 529.1	106.0
քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	285.2	285.2	79.0
ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	930.5	1 185.7	91.2
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	18 520.1	18 802.6	111.2
հիմնային մետաղների արտադրություն	82 827.8	103 432.6	114.9
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	**9 486.6**	**9 486.6**	**97.7**
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	**1 586.8**	**1 586.8**	**121.6**

Գյուղատնտեսություն. Արարատի մարզի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է՝ այն հիմնականում մասնագիտացած է պտղաբուծության, խաղողագործության, բանջարաբուծության մեջ: Արարատի մարզի հարթավայրային և նախալեռնային գոտիները նպաստավոր են բուսաբուծության, իսկ լեռնային գոտիները՝ անասնապահության զարգացման համար: Մարզի ազգաբնակչության 71.5% բնակվում է գյուղական վայրերում, որոնց կենսունակությունը պայմանավորված է գյուղատնտեսական գործունեությամբ:

Մարզի գյուղատնտեսական հողատեսքերը՝ ներառյալ տնամերձերը՝ 164 696 հա, կազմում են մարզի ընդհանուր տարածքի 78.8%-ը: Գյուղատնտեսական

հողատեսքերի 7.6%-ը կազմում են մշակովի տարածքները՝ ներառյալ տնամերձերը 42 260 հա:

Մարզի ակտիվ գյուղատնտեսական ուղղվածության ձեռնարկությունները 31-են, որոնցից 6-ը զբաղվում են կաթի վերամշակմամբ, 2-ը՝ մսի, մնացած 23-ը՝ բուսաբուծական մթերքների վերամշակմամբ: Վերամշակող կազմակերպությունների կողմից Արարատի մարզում ավելացել են 24.4%-ով, հանրապետությունում՝ 44.6%-ով:

Մարզից արտահանվում է հիմնականում գյուղմթերքի վերամշակումից ստացված արտադրանք՝ գինի, կոնյակ, միրգ, բանջարեղեն, պահածոյացված գյուղմթերք՝ և հանրապետությունու և հանրապետությունից դուրս մեծ պահանջարկ ունեն Արարատի մարզի քաղցրահամ մրգերը, բարջարեղենը, մուրաբաները, բնական հյութերը, չրերը: Մարզի արտահանման մեջ մեծ ծավալներ են կազմում բնական հանքաքարերի արտահանումը:

Գյուղատնտեսական համախառն արտադրանքը կազմել է 127.2 մլն. դրամ, որից բուսաբուծությունը՝ 95.1մլն. դրամ, անասնաբուծությունը՝ 32.1 մլն. դրամ:

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքսատարածությունը կազմել են 2465հա, միջին բերքատվությունը՝ 36.4ց/հա, խամախառն բերքը՝ 9.6 հազ.տ:

Կարտոֆիլի ցանքսատարածությունը կազմել են 534հա, միջին բերքատվությունը՝ 272.5ց/հա, խամախառն բերքը՝ 14.6 հազ.տ:

Բանջարանոցային մշակաբույսերի համար վերը նշված ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 4928հա, 399.1ց/հա և 271.2 հազ.տ, բոստանային մշակաբույսերի համար՝ 1077հա, 344.8ց/հա և 37.2հազ.տ, պտղի և հատապտղի տարածությունների դեպքում՝ 8630հա, 104.3ց/հա և 79.7հազ.տ:

Խաղողի տնկարկների տարածքությունները կազմել են 4800հա, միջին բերքատվությունը՝ 203.5ց/հա, խամախառն բերքը՝ 92.2 հազ.տ:

Խոշոր եղջրավոր կենդանիների գլխաքանակը կազմել է 40.1 հազ.գլուխ, այդ թվում կովեր՝ 13.3հազ.գլուխ, խոզեր 22.8հազ.գլուխ, ոչխարներ և այծեր՝ 87.9հազ.գլուխ, ձիեր՝ 0.8հազ.գլուխ:

Իրականացվել է 25351.2մլն. դրամի շինարարություն և 24483.8մլն.դրամի շինմոնտաժային աշխատանքներ:

- *Հողերի տնտեսական յուրացման բնութագիր*

Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարեր) հանքավայրից հայցվող տեղամասը ներառված է ՀՀ Արարատի մարզի Արտաշատ խոշորացված համայնքի Այգեզարդ բնակավայրի վարչական սահմաններում:

Համայքի բնակչությունը (շուրջ 1027 տնային տնտեսություն) հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, բուսաբուծությամբ և պտղաբուծությամբ: Ֆերմերները զբաղվում են այգեգործությամբ, անասնապահությամբ, բուսաբուծությամբ, բանջարաբուծությամբ, մեղվաբուծությամբ և կերարտադրությամբ: Համայնքի վարչական տարածքում կան 758 հա վարելահողեր, 8317հա արոտավայրեր, այդ թվում՝ 550 հա հեռագնա, շուրջ 2000հա խոտհարքներ, 121 հա բազմամյա խոտաբույսերով խոտածածկ տարածքներ, 40 հա այգիներ և 163 հա հողատարածք: Քանի որ մշակաբույսերը մշակվում են միայն համայնքի ոռոգվող տարածքներում, դրանց բերքատվությունը հիմնականում պայմանավորված է մատակարարվող ոռոգման ջրի քանակով և բնական վտանգներով:

Ընդերքօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո ընկերությունը նախատեսում է դիմել Արտաշատ համայնքի ղեկավարին՝ ՀՀ կառավարության 29.12.2011թ.-ի N1918-Ն որոշմամբ սահմանված կարգով հողերի նպատակային փոփոխություն իրականացնելու նպատակով:

Օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների բնույթը և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել են Արտաշատ համայնքի բնակիչներին: Քննարկվել է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին համայնքի բնակիչների ներգրավվման հարցը:

Կից ներկայացվում են քննարկումների արձանագրությունը և տեսաձայնագրությունը:

- ***Պատմության, մշակութային հուշարձաններ***

ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 24-ի թիվ 65-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը:

Այս հոդվածը ներկայացնում է Արարատի մարզի Արտաշատ քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 2 հուշարձան (2 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Բնակելի տուն	1948 թ.	Շահումյան փող. 28
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1968 թ.	քաղաքի մեջ

Հանքավայրի հայցվող տարածքում պատմամշակութային հուշարձաններ չկան: Հայցվող տարածքը գտնվում է պատմամշակութային հուշարձաններից նվազագույնը 7,8կմ հեռավորության վրա:

- ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքերի իրականացման ընթացքում դրսևորվելու են ազդեցություններ մթնոլորտի, հողային ծածկույթի, կենսաբազմազանության աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Մթնոլորտային օդ.

Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների մեթոդները և աշխատանքների ընթացքում կիրառվող ավտոտրանսպորտը դառնալու են գազերի և փոշու արտանետման աղբյուր, փոշեգոյացում տեղի է ունենալու նաև բացահանքի սահմաններում և բացահանքից դուրս՝ ավտոճանապարհներին: Փոշեգոյացման

աղբյուր են հանդիսանալու մակաբացման, արդյունահանման, լցակույտառաջացման աշխատանքները:

Հանքավայրի տարածքում փոշու և վնասակար գազերի արտանետումների հաշվարկը իրականացվելու է աշխատանքային նախագծի մշակման փուլում, ըստ տեխնոլոգիական գործընթացի բոլոր փուլերի: Նշված հաշվարկի հիման վրա ընդերքօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո ընկերությունը կմշակի և ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության հաստատմանը կներկայացնի սահմանային թույլատրելի արտանետումների նախագիծը, որի ելակետային օդերևութաբանական բնութագրերն ու գործակիցները նախատեսվում է ստանալ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ից:

Աշխատանքների իրականացման ժամանակ ընկերությունը առաջնորդվելու է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ, համաձայն որի ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի (երկօքսիդի հաշվարկով), մրի և ծծմբային անհիդրիդի սահմանային թույլատրելի խտությունները (ՍԹԿ) համապատասխանաբար կազմում է 5մգ/մ^3, 0.2մգ/մ^3, 0.15մգ/մ^3 և 0.5մգ/մ^3: Նախնական հաշվարկներին համաձայն, հանքավայրի տարածքում վնասակար գազերի առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները: Այդ նպատակով ծրագրավորվում են մի շարք բնապահպանական կառավարման միջոցառումներ, որոնց նկարագիրը ներկայացված է ստորև, 5-րդ գլխում:

Ջրային ավազան. Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի սահմաններում չկան մակերևութային ջրային հոսքեր, ստորերկրյա և գրունտային ջրերի հորիզոններ, միաժամանակ՝ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Վեդի գետը և դրա ձախակողմյան վտակ Սելավ Շաղափը հոսում են հանքավայրի տարածքից ավելի քան 6կմ հեռավորության վրա:

Հողային ծածկույթ.

Աշխատանքների իրականացման արդյունքում խախտվելու են արտադրական հրապարակի, բացահանքի, լցակույտերի և ճանապարհների համար օգտագործվող տարածքները: Բացասական ազդեցությունը դրսևորվելու է բնական լանդշաֆտի վրա:

Հնարավոր է նաև տեղի ունենա տարածքի աղտոտում նավթամթերներով արտադրական հրապարակի, ավտոտրանսպորտի և տեխնիկայի կայանատեղիներում:

Հողաբուսական շերտ հանքավայրի տարածքում չկա, տարածքը ամբողջությամբ կազմված է օգտակար հանածո հանդիսացող կրաքարերի հաստվածքով: Մակաբացման ապարները ներկայացված են 0.48մ հզորությամբ հողմահարված կրաքարերի շերտով:

Խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնումները իրականացվելու է արդյունահանման աշխատանքների ավարտից հետո՝ մակաբացման ապարների կիրառմամբ:

Բուսական և կենդանական աշխարհ.

Հանքավայրի տարածքը ներկայացված է ՀՀ տարածքի չոր տափաստանային լանդշաֆտային գոտում լայն տարածված բուսատեսակներով: Տեղամասի սահմաններում աճող բուսատեսակները ունեն լայն տարածում ոչ միայն Արարատի մարզի, այլև Արմավիրի, Վայոց ձորի և Սյունիքի անապատային-կիսանապատային լանդշաֆտներում:

Խոշոր կաթնասունների բներ/որջեր հանքավայրի տարածքում չկան: Տարածքում չեն արձանագրվել Կենդանիների և Բույսերի Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, հետևաբար օգտակար հանածոների արդյունահանման ազդեցությունը տարածքի կենսաբազմազանության վրա լինելու է նվազագույն:

Աղտոտում ընդերքօգտագործման թափոններով.

Ընդերքօգտագործման թափոններին են դասվելու մինչև 0.48մ հզորությամբ մակաբացման ապարները: ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն և 2015 թվականի օգոստոսի 20-ի N244-Ն հրամանների համաձայն հաշվառվել են 3400012001995 ծածկագրով-փխրուն մակաբացման ապարներ: Դրանք դասվել են վտանգավորության 5-րդ դասին, այսինքն՝ ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ են:

Թափոն են հանդիսանալու օգտագործված դիզելային և բենզինային շարժիչների յուղերը, որոնք պատկանում են «Բանեցված շարժիչների յուղերի

թափոններ» տեսակին, ծածկագիր՝ 5410020102033: Քանակը՝ 1,2տ/տ /նախնական, հիմնական փուլում կճշգրտվի/:

Առաջանալու է նաև չտեսակավորված կենցաղային աղբ: Ծածկագիրը՝ 9120040001004: Կազմը՝ ապակի, փայտ, թուղթ, կտոր, սննդի մնացորդներ, պոլիմերներ: Հրդեհապայթյունավտանգ չէ, կոռոզիոն ակտիվության տեսակետից պասիվ է, ռեակցիոնունակ չէ: Քանակը՝ 1000կգ/տ /նախնական, հիմնական փուլում կճշգրտվի/:

Բնության հատուկ պահպանվող տարածքների վրա ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում, քանի որ «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրը գտնվում են հայցվող տարածքից համապատասխանաբար 10կմ և 9,8կմ հեռավորությունների վրա: Հայցվող տարածքում հաշվառված չեն բնության հուշարձաններ, չեն արձանագրվել ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակների աճելա-կամ ապրելավայրեր:

Պատմամշակութային հուշարձաններ օգտակար հանածոյի արդյունահանման համար հայցվող տարածքում չկան, տեղամասը չի համընկնում նաև հուշարձանների պահպանության գոտիներ հետ, ինչը բացառում է որևիցե բացասական ազդեցությունների դրսևորում պատմամշակության ժառանգության օբյեկտների վրա:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Հանքի տարածքում նավթամթերքների պահեստավորումը և պահումը նախատեսվում է արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որի տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:
- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար : Այդ աշխատանքները կատարվելու են մասնագիտացված ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Երկրորդային վերամշակումն իրականացնող ընկերությունը կընտրվի արդյունահանման թույլտվությունը ստանալուց հետո: Փոխարինման աշխատանքները հնարավորինս կկատարվեն մոտակա բնակավայրերի մասնագիտացվաշ կազմակերպություններում, ինչը թույլ կտա բացառել հանքի տարախքում այս տեսակի թափոնների առաջացումը :
- Արտաթորվող թունավոր նյութերի ֆիլտրերի տեղադրում:
- Փոշենստեցման նպատակով ճանապարհների, բացահանքի, արտադրական հրապարակի ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին : Տեխնիկական և խմելու նպատակներով անհրաժեշտ ջուրը գնվելու է և տեղափոխվելու է մոտակա Վեդի համայնքից՝ պայմանագրային հիմունքներով՝ ընդերքօգտագործման թույլտվության ստացումից հետո : Ըստ գործող նորմատիվների՝ 1մ^2 տարածքի ջրցանման համար անհրաժեշտ տեխնիկական ջրի քանակը կազմում է 1,5լ: Անհրաժեշտ տեխնիկական ջրի ծավալը կորոշվի օրական կտրվածքով՝ կախված աշխատանքների վայրից, ծավալից, եղանակային պայմաններից: Ջրի հաշվարկը

կներկայացվի աշխատանքային նախագծում՝ ենթակառուցվածքների հստակ մակերեսները հաշվարկելուց հետո:

- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով: Դատարկված հորը լցվելու է քարերով, ծածկվի հողի շերտով:
- Արտադրական հրապարակի բարեկարգում, կանաչապատում չորադիմացկուն թփուտային սորտերի կիրառմամբ (սզնի, չմենի, մասրենի):
- Կենցաղային աղբի համաքում հատուկ անթափանց տարողություններում, աղբահանության պայմանագրի կնքում տարածաշրջանում գործող օպերատորի հետ, աղբահանության վճարի հաշվարկում և վճարում:
- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:
- Աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն : Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80դԲԱ: Օգտակար հանածոյի արդյունահանման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թռթրումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:
- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:
- - Նախատեսվում են աշխատողների սանիտարակենցաղային հարմարություններ՝ հանդերձարան, ցնցուղարան, զուգարան և հանգստի սենյակ՝ համաձայն ՀՀ

առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի:

Նախատեսվում են կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցառումներ, ներառյալ ընդերքօգտագործման հարակից տարածքներում:

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունների համար առաջարկվող մեղմացնող միջոցառումները ներառում են.

- Աշխատանքների ընթացքում բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տեղամասերից դուրս:

- Տեխնիկա-տրանսպորտային միջոցները վարել բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով, անհրաժեշտության դեպքում բարելավել այն:

- Արտադրական հրապարակներում, հանքախորշերում, ճանապարհներին և այլ արտադրական տեղամասերում, հատկապես չոր եղանակին, մշտապես կիրառել ջրցան մեքենաներ փոշենստեցման համար:

- Հանքանյութի տեղափոխման ժամանակ, հատկապես չոր եղանակին, բեռնատարների թափքը ծածկել, փոշու արտանետումները հնարավորինս մեղմելու համար:

- Տեխնիկական միջոցների վառելիքաքսուքային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի վթարային արտահոսքը բացառելու համար տեխնիկա-տրանսպորտային միջոցները շահագործել միայն սարքին վիճակում:

- Հնարավորինս արագ վերակագնել խախտված տարածքները:

- Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին:

- Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխսման ժամանակամիջոցում հնարավորինս նվազեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:

- Ամբողջ շինարարական աշխատանքների ընթացքում հնարավորինս նվազեցնել աղմուկն ու լուսավորությունը:

- Անհրաժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական

պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" թիվ 781-Ն որաշման դրույթների վրա:

- Նախատեսվում է առաջնորդվել 18,08,2021թ,-ին ընդունված Կառավարության Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկամն կարգը սահմանելու մասին N1352-Ն որոշման պահանջներով:

- Նախատեսվում է հողի բերրի շերտի հետ կապված միջոցառումներն իրականացնել ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն և ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի N1396-Ն որոշումների պահանջների համաձայն:

Նախատեսվում են կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցառումներ, ներառյալ ընդերքօգտագործման հարակից տարածքներում:

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունների համար առաջարկվող մեղմացնող միջոցառումները ներառում են.

- Աշխատանքների ընթացքում բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տեղամասերից դուրս:
- Տեխնիկա-տրանսպորտային միջոցները վարել բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով, անհրաժեշտության դեպքում բարելավել այն:
- Արտադրական հրապարակներում, հանքախորշերում, ճանապարհներին և այլ արտադրական տեղամասերում, հատկապես չոր եղանակին, մշտապես կիրառել ջրցան մեքենաներ փոշենստեցման համար:
- Հանքանյութի տեղափոխման ժամանակ, հատկապես չոր եղանակին, բեռնատարների թափքը ծածկել, փոշու արտանետումները հնարավորինս մեղմելու համար:
- Տեխնիկական միջոցների վառելիքաքսուքային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի վթարային արտահոսքը բացառելու համար տեխնիկա-տրանսպորտային միջոցները շահագործել միայն սարքին վիճակում:
- Հնարավորինս արագ վերակազնել խախտված տարածքը, իրականացնել նաև կենսաբանական ռեկուլտիվացիա:
- Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին:

- Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխսման ժամանակամիջոցում հնարավորինս նվազեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:
- Ամբողջ շինարարական աշխատանքների ընթացքում հնարավորինս նվազեցնել աղմուկն ու լուսավորությունը:
- Անհրաժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" թիվ 781-Ն որաշման դրույթների վրա:
- Խախտված հողատարածքների վերականգնման ծախսերի հաշվարկները կատարելու ժամանակ նախատեսվում է առաջնորդվել 18.08.2021 թ.-ին ընդունված Կառավարության «ՌԵԿՈՒԼՏԻՎԱՅԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԱՌԻ ՄԱՍԻՆ» N1352-Ն որոշման պահանջներով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

- Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կատարել հանքի օտարման տարածքում խախտված հողերի (բացահանք, արտադրական հրապարակ, լցակույտ) լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա, ինչպես նաև կենսաբանական ռեկուլտիվացիա::
- Հանքի աշխատակիցների համար կենսաբազմազանության, բուսական և կենդանական պահպանվող տեսակների վերաբերյալ վերապատրաստման դասընթացների կազմակերպում:
- Հանքի աշխատակիցների համար սանիտարակենցաղային հարմարությունների ստեղծում՝ հանդերձարանը, ցնցուղարանը, զուգարանը և հանգստի սենյակ:

Հանքավայրի տարածքում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

- երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ հանքավայրը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում,
- հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարհանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Արտադրական հրապարակումն կենցաղային նշանակության վագոն-տնակներում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ:

Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Արտադրական տարածքի հատուկ հատկացված վայրերում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

Հանքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը

մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

Հանքի տարածքում կնախատեսվի համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժական կապ), որով հնարավոր է արտակարգ իրավիճակների ժամանակ կապ հաստատել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, շտապ օգնության և փրկարար ծառայության հետ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Հանքավայրի շահագործման ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Հողային ռեսուրսների օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով արտադրական հրապարակի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ դրանց պահպանման համար նախատեսված տեղից դեպի հավաքող փոսը ուղղությամբ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,
2. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
3. հանքի հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում՝ տարեկան մեկ անգամ,
4. ստորերկրյա և մակերևութային ջրերի մշտադիտարկում՝ տարեկան մեկ անգամ,
5. աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկում՝ եռամսյակը մեկ անգամ:

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում :

Կենսաբազմազնության դիտարկումը կատավելու է համապատասխան մասնագետների կողմից (բուսաբան, կենսաբան)՝ պայմանագրային հիմունքներով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի նախնական տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 10-ում: Մշտադիտարկման կետերի տեղադիրքերը կարող են փոփոխվել շահագործման նախագծի մշակման փուլում՝ բացահանքի և ենթակառուցվածքներ տեղադիրքերի ճշգրտման ժամանակ:

Մշտադիտարկումների համար նախատեսվում է տարեկան 150 000 ՀՀ դրամ, իսկ բնապահպանական միջոցառումների համար՝ 200 000 ՀՀ դրամ:

«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշման համաձայն ներկայացվում է մշտադիտարկումների աղյուսակ՝

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Մթնոլորտային օդ	բացահանքի տարածք, ճանապարհներ, արտադրական հրապարակ,	- հանքափոշի, այդ թվում՝ ծանր մետաղներ և կախյալ մասնիկներ (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ, բենզ(ա)պիրեն, մանգանի	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ

		օքսիդներ, ֆտորիդներ, երկաթի օքսիդներ, ֆտորաջրածին		
Հողային ծածկույթ	արտադրական հրապարակ, հանքի տարածք,	- հողերի քիմիական կազմը (pH, կատիոնափոխանակ մա ն հատկությունները, էլեկտրահաղորդակա նու թյան հատկանիշներ, մետաղների պարունակությունը՝ Fe, Ba, Mn, Zn, Sr, B, Cu, Mo, Cr, Co, Hg, As, Pb, Ni, V, Sb, Se), -- հողերում նավթամթերքների պարունակությունը	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտությու ն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	• տարեկան մեկ անգամ • ամսական մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայ ր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	ընդերքօգտագործ ման տարածքին հարակից շրջան	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացի այի փոփոխությ ուն	հաշվառում, նկարագրությու ն, քարտեզագրում	տարեկան մեկ անգամ

Մակերևութային ջրեր	շահագործական փորվածքների արտահոսքեր, հիդրոտեխնիկական կառույցների արտահոսքեր, ջրերի հեռացման համակարգեր, կենացաղային արտահոսքեր	ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ սահմանված նորմեր	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, հոսքի ուսումնասիրություն	շաբաթական մեկ անգամ
Ստորերկրյա ջրեր	հանքավայրի շրջակայքում առկա բնական աղբյուրների ելքեր, ստորգետնյա ջրերի հորիզոնների դիտակետեր	- ջրերի քիմիական կազմ, - մակարդակ	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	ամսական մեկ անգամ
Աղմուկ և թրթռում	Հանքավայրի տարածք	Հանքարդյունահանման աշխատանքներ, մեքենաների տեղաշարժ	Գերազանցումների հայտնաբերում, չափումների իրականացում	Չափումներ, եռամսյակը մեկ անգամ

Հորանցիզ տարածքի մենաշնորհազատություն մշտադիտարկման կետ

Հողային ծածկույթի մշտադիտարկման կետ

Մակերևութային ջրերի մշտադիտարկման կետ

մթնոլորտային օդի մշտադիտարկման կետ

Ամուկի և թրթռման մշտադիտարկման կետ

Ստորերկրյա ջրերի մշտադիտարկման կետ

Նկար 10.

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ
1. Աշխատանքի անվտանգություն	Վնասվածքներ և պատահարներ աշխատանքների կատարման վայրում	• Հանքի աշխատողների ապահովվում համազգեստով և Անհատական Պաշտպանության Միջոցներով (ԱՊՄ) • Աշխատակիցների սանիտարահիգիենիկ պայմանները կապահովվեն առաջնորդվելով ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին համապատասխան • Հանքի սարքավորումների շահագործում ԱՊՄ օգտագործման կանոնների խիստ պահպանում • Աշխատակիցների իրազեկում պաշտպանության հրահանգների վերաբերյալ	• հանքի աշխատողների համազգեստ և համապատասխան ԱՊՄ ապահովում • սարքավորումների շահագործման և օգտագործման հրահանգների խախտումների բացառում
2. Արդյունահանման աշխատանքներ	Օդի աղտոտում փոշիով և	• Փոշեզոյացման կանխում օգտակար հանածոյի արդյունահանման, բարձման և	• Արտադրական հրապարակի, հանքախորշի, ճանապարհների ջրցանում, տեղափոխման ժամանակ բարձված

	արտանետումներով	տեղափոխման ժամանակ • Աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բացայրման արգելում	խճի ծածկում • աշխատանքների կատարմանվայրում նյութերի/ թափոնների բաց այրման բացառում • հանքի տեխնիկայի և մեքենաների շահագործում առանց հավելյալ արտանետումների • Մոտակայքի բնակիչներից բողոքների բացառում

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանի 2
		- Հանքի տեխնիկան և մեքենաները պահել պատշաճ տեխնիկական վիճակում՝ բացառելով ավելորդ արտանետումները	
	Աղմուկ	• Սահմանված աշխատանքային ժամերի պահպանում • Գեներատորների, օդի կոմպրեսորների և այլ ուժային մեխանիկական սարքավորումների շարժիչների ծածկերի փակում շահագործման ընթացքում • Աղմկախլացուցիչների տեղադրում շարժական կայանների և սարքավորումների վրա • Սարքավորումների կանխարգելիչ վերանորոգում աղմուկը նվազեցնելու նպատակով • Ոչ անհրաժեշտ և չօգտագործվող սարքավորու	• Աշխատանքային ժամերից հետո աշխատող սարքավորումների բացառում • հանքի սարքավորումների բավարար տեխնիկական վիճակ • միացված չօգտագործվող սարքավորումների բացառում • Մոտակայքի բնակիչներից բողոքների բացառում

		մների անջատում	
Կենսաբազմազանություն	Ոչնչացում, վնասում	- Աշխատանքների ընթացքում բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տեղամասերից դուրս: - Տեխնիկա-տրանսպորտային միջոցները վարել բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով, անհրաժեշտության դեպքում բարելավել այն: - Արտադրական հրապարակներում, հանքախորշերում, ճանապարհներին և այլ արտադրական տեղամասերում, հատկապես չոր եղանակին, մշտապես կիրառել ջրցան մեքենաներ փոշենստեցման համար: - Հանքանյութի տեղափոխման ժամանակ, հատկապես չոր եղանակին, բեռնատարների թափքը ծածկել, փոշու արտանետումները հնարավորինս մեղմելու համար: - Տեխնիկական միջոցների վառելիքաքսուքային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի վթարային արտահոսքը բացառելու համար տեխնիկա-տրանսպորտային միջոցները շահագործել միայն սարքին վիճակում: - Հնարավորինս արագ վերակագնել խախտված տարածքը, իրականացնել նաև կենսաբանական ռեկուլտիվացիա: - Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների	

		հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին: - Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխսման ժամանակամիջոցում հնարավորինս նվազեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները: - Ամբողջ շինարարական աշխատանքների ընթացքում հնարավորինս նվազեցնել աղմուկն ու լուսավորությունը: - Անհրաժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" թիվ 781-Ն որաշման դրույթների վրա:	
3. Հանքի տեխնիկայի շահագործում	• Շրջակա միջավայրի աղտոտում արտանետում ներով և արտահոսքերով • Մոտակայքի բնակչությանը պատճառած անհարմարություն	• Հանքի սարքավորումների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում • Ոչ մի հավելյալ արտանետում • Վառելիքի և քսայուղերի ոչ մի արտահոսք • Աշխատանքային ժամերի պահպանում	• Մեքենաներ ի և տեխնիկայի պատշաճ տեխնիկակա ն վիճակ • Հաստատված աշխատանքային ժամերից հետո ոչ մի շահագործվող ծանր տեխնիկա կամ մեքենա Մոտակայքի բնակիչներից բողոքների ստացման բացակայություն
4.Արդյունահանման սարքավորում	• Սարքավորումների շահագործման հետևանքով մակերևութային և	• Մեքենաների և տեխնիկայի լվացում բնականհոսքերից առավելագույն	• Մեքենաների լվացման արդյունքում ուղղակի արտահոսքի

ների սպասարկում	• ստորգետնյա ջրերի և հողի աղտոտում	հեռավորության վրա • Հանքի տեխնիկայի յուղում և լցավորում • նախապես որոշված լցավորման կայաններում/ սպասարկման կետերում	բացակայություն դեպի ջրային ավազաններ • Հանքի տարածքի սահմաններում կամ • մոտակայքում հողի վրա վառելիքի կամ քսայուղերի հետքերի բացակայությու ն

Գործողությու ն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառո ւմ	Մեղմման հայտանիշ
	նավթամթերքներով - Վնաս հրդեհի դեպքում		- Հրդեհի մարման հիմնական միջոցների առկայություն հանքի տարածքում
5. Ընդերքօգտա գործման թափոնների գոյացում	• Ընդերքօգտագործ ման թափոնների ոչ պատշաճ կառավարման արդյունքում վթարային վիճակների առաջացում • Հանքի տարածքի և շրջապատի գեղագիտական տեսքի վատացում	• Մակաբացման ապարների պահեստավորում հատուկ հատկացված վայրերում • Մակաբացման ապարների լցակույտերի պարբերական ջրցանում փոշու գոյացումը նվազացնելու նպատակով • մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությու ններին ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից	• Հանքի տարածքում Մակաբացման ապարների կուտակում հատկացված վայրերում • Հանքի տարածքում փոշու արտանետումներ ի քանակի համապատասխ անություն ՍԹԱ նախագծին
6. Հեղուկ	• Մակերևու թային և ստորգետնյ ա ջրերի	Հանքի տարածքում	Հանքի տարածքում պատշաճ սանիտարական

թափոնների գոյացում	աղտոտում • Աշխատանքների կատարման վայրում սանիտարահիգիենիկ պայմանների վատացում	զուգարաններիտեղակայում և պահպանում սանիտարական նորմերին համապատասխան	պայմաններում գտնվող զուգարանների առկայություն
7. Բանեցված յուղերի հեռացումից գոյացող թափոններ	• Արտադրական հրապարակի տարածքի աղտոտում • Արդյունահանման աշխատանքների կատարմանվայրի և շրջապատի գեղագիտական տեսքի վատթարացում	• Յուղերի անվտանգ փոխադրում պահեստային տարածք • Յուղերի անվտանգ պահեստավորում • Յուղերի հեռացում լիցենզավորված կազմակերպության կողմից	• Փոխարինված յուղերը պատշաճ կերպով պահեստավորում • Փոխարինված յուղերը հեռացում լիցենզավորված կազմակերպության կողմից

8. Երթևեկության և հետիոտների անվտանգություն	Ուղղակի և անուղղակի վտանգներ երթևեկությանը և հետիոտներին հանքի շահագործման աշխատանքների ժամանակ	• Նախազգուշացնող նշաններ, արգելքներև երթևեկության ուղղության փոփոխում • Երթևեկության կառավարման համակարգ և անձնակազմի ուսուցում,հատկապես հանքի մուտքի մոտ և • մոտակա ինտենսիվ երթևեկության տարածքում պարբերանշանների տեղադրում • հրդեհաշիջման սկզբնական միջոցների տեղադրում, հակահրդեհային անվտանգության պաստառների, հրդեհների մասին	• Հանքի ապահով տարածք • Աշխատանքների հստակ տեսանելի տարածք, հանրության զգուշացում հնարավոր վտանգների վերաբերյալ • Կարգավորված երթևեկություն

		ուղեցույց- հիշեցումների տեղադրում • շրջանցման ուղղությունը ցույց տվողցուցանակների տեղադրում հրդեհաշիջման նպատակով ջրային աղբյուրների արագ մոտեցումն ապահովելու նպատակով	
9. Արտակարգ իրավիճակների պատրաստվածության պլան		կառավարման համար: Անվտանգ անցումների ապահովում հետիոտների համար այն վայրերում, որտեղ անցնում ենհանքը սպասարկող մեքենաները • Աշխատանքային ժամերի հարմարեցումտեղի երթևեկության պայմաններին, օրինակ՝ խուսափում խոշոր փոխադրումներից ինտենսիվ երթևեկության ժամերին, • Տարածքում երթևեկության ակտիվ կառավարում պատրաստված և տեսանելի արտահագուստով անձնակազմի կողմից, եթե դա պահանջվում է մարդկանց անվտանգ ու • հարմարավետ տեղաշարժի համար	սահմանել գործողություններ, որոնք պետք է վերահսկել՝ նվազագույնի հասցնելու համար կյանքի կորստի և ունեցվածքի վնասի վտանգը արտակարգ իրավիճակների առաջացման ռիսկը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու գործողությունների ծրագիր, որն իր մեջ կներառի անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ իրականացվող միջոցառումները և հրդեհային անվտանգությունը

Գրականություն

1. «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ

2.Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.

3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.

4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.

5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР

6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954

8. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.

9. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван

10. “Дикорастущие сЪедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.

11. “Цветушие уголки биоразнообразия”, FAO

12. ՀՀ Արարատի մարզպետարանի պաշտոնական կայք